



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1669-1678

17
4-64

185
NO 204

ՆՈՒԷՐ

ԿԱՂԱՆԴԻ

ԿԱՄ

ՓՈՒՔՐԻԿ ՀԱՒԱՔԱՄՈՅ

ՅՅՏԱԿԱՐ ԽՐԱՏՈՒՅ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ
ՕՐԻՆԱԿԱՅ

ՀՐԱՅԱՐԱԿԵԱԼ

Ծախիւք Նպաստամատոյց Ընկերութեան

ՆՈՐ-ԹԱՂ ՅԻՒՍԿԻՏԱՐ




Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

1882—1883

74
23



ՆՈՒԷՐ

17

ԿԱՂԱՆԳԻ

Կ Ա Մ

ՓՈՒԲՐԻԿ ՀԱՒԱՔԱՅԻՆ

ՕՂՏԱԿԱՐ ԽՐԱՏՈՒՅ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ ՕՐԻՆԱԿԱՅ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ

Ծախիւք Նպաստամատոյց Ընկերութեան

ՆՈՐ-ԹԱՂ ՅԻՒՍԿԻՒՍԵՐ



معارف و نظارت جليله سنك رخصتيله طبع اول منشدر



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

1882

6964-57

9079-ww



Աստուծոյ և այլ առթիւ տղայոց տրուած
 նուէրներն պէտք է որ իւրեանց հասկանալի
 լեզուաւ գրուած, բարոյական խրատներ և
 գեղեցիկ օրինակներ պարունակող և կամ
 սրտի ումտաց զարգացման նպատառող գրքոյկ-
 ներ լինին, վասն զի օրինակաւ, այսինքն պատ-
 մութեան ձևով, տրուած բարոյական խրատ-
 մը տղայոց աւելի հաճելի կը թուի և աւելի
 դիւրաւ կը մտնեն: Սոյն համազմամբ ջանացի
 որ գրքուկս, ըստ կարելոյն, օգտակար լինի
 և միանգամայն տղայոց դիւրահասկանալի,
 վասն որոյ Քաղղիարէնէ թարգմանուած մա-
 սերն, տեղ տեղ համառօտուած և տեղ տեղ
 ծանօթութիւններ յաւելցուելով ընդար-
 ձակուած են:

Նպատաւատոյց բարեհամբաւ Ընկերու-
 թիւնն ևս հրատարակելով գրքոյկս, կը յու-
 սայ Ս. թէ՛ փոքրիկ ծառայութիւն մի մա-
 տուցած կը լինի ազգային մանկտւոյն Բ. թէ՛
 փոխանակ նուիրատուներ տալով դրամական
 նուէրներ հաւաքելու գրքոյկս արդոյ հա-
 սարակութեան քաջալերութեանն պիտի ար-
 ժանանայ և փոքրիկ շահու միջոց մը պիտի
 լինի:

Աւերորդ կը համարիմ' աստ գովեստներ
շուայել վերոյիշեալ ընկերութեան , որ նոյն-
պէս աղգային մանկտւոյն յառաջդիմութիւնն
ունի իրեն նպատակ և որ երեք տարիներէ
եր կը յարատեէ՝ հաւատարիմ իւր նպա-
տակին :

Կը յուսամ , որ ազնիւ ընթերցողք ներո-
ղամիտ աչօք կը նային գրքուկիս մէջ սպր-
դած սխալանաց և թերութեանց :

Ն. Ս.





ՄԱՐԿՆԻ
ԿԱՂԱՆԴԻ

ԿՐԾՆՔ

Աստուած զմեզ իրեն նման, այսինքն բա-
նաւոր ստեղծեց, որպէս զի կարենամք ճանա-
ջել զինքն իբրև անվախճան ճշմարտութիւն
և սիրել իբրև անհուն բարութիւն (Ֆէնէլօն) :

Կրօնքը կը մտիթարէ զմարդ դժբաղդու-
թեան ժամանակ և կենաց դառնութեանց
երկնային քաղցրութիւն մի կը խառնէ (Պ.) :

Հիանալի բան, կ'ըսէ Մոնթէսքիէօ, քրիս-
տոնեաց կրօնքն որ կը թուի թէ հանդերձեալ
կենաց երջանկութիւնն միայն նպատակ ու-
նի, այս աշխարհի մէջ ևս մեզ երջանկութիւն
կը պատճառէ, փոքրիկ ընկերներս, կրօնից
ազդեցութիւնն միշտ մեծ եղած է աշխար-
հային կենաց վրայ ևս, նա՛ որ կրօնքն առաջ-
նորդ ունեցած է իւր ամեն գործոց մէջ հան-
գիտ և խաղաղ կեանք մ՞ ունեցած է միշտ,
այնպիսեոյն համար ո՛չ աշխարհային կեանքը
դժնդակ է և ոչ մահն սոսկալի, զի արդարին

համար ինչպէս ըսաւ Աւֆօնթէն, մահը գեղեցիկ օրուան մը երեկոյն է. ուստի պէտք է որ ձեր դպրոցական կեանքէն սկսելով սիրէք զԱստուած բոլորով սրտիւ, վատահիք Աստուածային նախախնամութեան և պահէք Նորա պատուիրանները, դորս ձեզ արդէն կուսուցանեն, ձեր դաստիարակներն և ձեր ծնողքն:



ԵՐԱՆԻ ԱՆՈՐ ՈՐ ՄՍԻՅՈՒՐ
ԽԻՂՃ ԿԸ ԿՐԷ

Օեր և առաքինի ձկնորս մը, իրիկուն մը նաւակը նստաւ իւր որդւոյն հետ և ծովուն վրայ կը յառաջանար իւր ուսկանները տարածելու համար մերձակայ կղզեաց եղերքը գտնուող եղէգներուն մէջ: Արեւն կընկղմէր ծովուն ծոցը և այիքներն ու երկինք բոցավառ կը թուէին: Ա՛հ, մեր շուրջը գտնուող ամեն բան որչա՛փ գեղեցիկ է, ըսաւ հիացմամբ, դաւակն, տէսէք ի՛նչպէս կարապն, իւր դուարթ թուխսով շրջապատուած, երկնից ոսկէզօծ ցոլացման մէջ կըխորասուզի, տէսէք ինչպէս կը նաւարկէ հետքեր գծելով ալեաց մէջ, ինչպէս կը տարաւ

ծէ իւր թւերը . ի՞նչ ակտորժելի շշու՛նչ մը կը
հանեն սա եղերքի անտառին կաղամախի-
ներն , և սա կղզւոյն մէջ , դեռ կանաչ ցո-
րեններն ինչպէս կը տարուբերին և կը ծը-
ռին դեփիւռին քաղցր վիշմամբն , ո՛հ , որ-
չա՛փ դեղեցիկ է բնութիւնն և որչափ դո՛հ և
երջանիկ կընէ զմեզ :

Ս. յ'ո , պատասխանեց հայրն , բնութիւնն
մաքուր հաճոյքներ կը պարգեւէ մեզ : Չա-
ւակս , դուն միշտ պիտի վայելես այն հա-
ճոյքներն , եթէ բարի մարդ ըլլաս և եթէ բու-
ռն կիրքեր չը վրդովեն կեանքդ . հանդարտ
խիղճ մը բարեաց ամենէն թանկագինն է ,
այս սկզբունքին հետևելով է որ մինչև այսօր
երջանիկ ապրած եմ . ծնելէս ՚ի վեր մեր
խրճիթը շրջապատող անտառն վաթսուն ան-
գամ կանաչ դարդարուած է . այս երկար-
կեանքը դարնան դեղեցիկ օրուան մը պէս
անցած է , հանդարտութեամբ և մաքուր
հաճոյքներով : Սակայն և այնպէս բոլոր նե-
ղութիւններէ դերժ եղած չեմ . շատ անգամ
թեթևաւակովս ծովը ճեղքած ժամանակս
փոթորկի բռնուած եմ , նաւակս ջրոյ լերան
մը դադաթէն կախուած կը կենար , և յան-
կարժ , ահարկու ջախջախամբ ալիքներն վե-


բոաին կ'իջնէին և ես անոնց հետ . ծովու
յամբ բնակիչներն կը դողային երբ կայ-
ծակին որոտումն և ալեաց ջախջախումն կը
լսէին և անդունդին խորը կապաստանէին .
եւ կը կարծէի տեսնել թէ իւրաքանչիւր
ալիք խոնաւ գերեզման մի կը բանայ ինձ
համար . հովերը կը փչէին և գետերու
նման ալիքներն գլխուս վրայ էն կ'անցնէին :

Այլ սակայն հողմոց սաստկութիւնն իսկոյն
կը հանդարտէր , օդը կը պարզուէր և ես
ալեաց հանդարտ հայելոյն մէջ կը նշմարէի
երկինքը . իսկոյն կապուտակագոյն կունակով
և կարմիր աչքերով թառափլն (մերսին պա-
լըզը) որ ծովային խոտերուն մէջ քաշուած
էր , դուրս կելնէր իւր ապաստանարանէն :
Բազմաթիւ ձկունք կոսանուին ալեաց վրայ
ուր արեգակն կը ցոլանար , և հանդար-
տութիւնն ու ուրախութիւնն վերստին կը
ծնէին սրտիս մէջ :

Ո՛ դաւակս , քու սէրդ է մանաւանդ որ
դիս երջանիկ ըրած է , մինչև հիմա հնազանդ
եղար իմ դասերուս , հէտեէ՛ միշտ անոնց
և դու երջանիկ պիտի լինիս ինձ նման և բը-
նութիւնն գեղեցիկ պիտի լինի քու աչացդ :

ՕՐԱԿԱՆ ՔՆՈՒԹԻՒՆ

Անուանի խնաստասէրն Պիւթաղոր կը պատուիրէր իւր աշակերտներուն որ իրիկունները մտքերնին ամփոփեն և իրենք իրենց հետեւեալ հարցումներն ընեն . Ս. յսօրս ինչպէ՞ս անցուցի . ու՞ր տեղուանք գնացի . ի՞նչ մարդիկ տեսայ . ի՞նչ ըրի և ի՞նչ բան զանց առի : Ս. յս ընտիր վարժութիւն մ'է . ինքզինքն բարւոքելու ու իւր երջանկութեան աշխատելուն ախանձախնդիր ամեն ոք պէտք է ամեն օր կա'մ պառկած միջոցին կա'մ առաւօտուն անկողնէն ելած ժամանակ քանի մը վայրկեան զոհէ իւր մտքէն անցնելու համար թէ ինչ ըրած , ըսած , լսած և տեսած է նախընթաց աւուր մէջ , այսպիսով մարդ միշտ իւր օրուան մէջ պարապ տեղը վատնուած մաս մը պիտի գտնէ և հետեւեալ օրն պիտի աշխատի աւելի օգուտ քաղել ժամանակէն : Գուք ևս , փոքրիկ բարեկամներս , եթէ կեանքը կը սիրէք մի վատնէք ժամանակը :



ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՁ
ՅԱՌԱՋԴԻՄԵԼՈՒ ՄԻՋՈՑ

Երիտասարդութեանս ժամանակ, կըսէ
Նենիամին Տրանքլին, բարոյական կատարե-
լութեան հասնելու յանդուգն և դժուար
խուրհուրդն յղացաւ մտքիս մէջ, կը փափա-
քէի հեռի կենալ բոլոր այն սխալմունքներէն
յորս կրնայ զիս քարշել բնական միտում մը,
սովորութիւնն կամ ընկերութիւնն. այս դա-
ղափարով հետեւեալ մէթոտը փորձեցի. ի՛նչ
բան որ ինձ հարկաւոր և փափաքելի երև-
ցաւ, միացուցի առաքինութեան տասն եր-
կու անուանց տակ և իւրաքանչիւր անուան
քով համառօտ խրատ մը դրի, նոցա նշանա-
կութիւնն յայտնելու համար :

Աւասիկ տասներկու առաքինութիւններն
իրենց պատուիրաններով :

1. Բարեխառնութիւն. — Մի՛ ուտէք ծան-
րանալու չափ և մի՛ խմէք թմրելու չափ :

2. Լռութիւն. — Ի՛նչ բան որ ձեզ և ուրիշ-
ներուն կրնայ պիտանի լինել, զայն խօսեցէք՝
պարապ խօսակցութիւններէ զգուշացէք :

3. Կարգաւորութիւն. — Ձեր տան մէջ
թող ամեն բան իւր տեղն ունենայ և ամեն

դործ իւր ժամանակն :

4. Որոշումն . — Որոշեցէք ընել ինչ որ կը պարտիք, և ըրէք, առանց պակասելու, ինչ որ որոշած էք :

5. Խնայողութիւն, — Ձեր կամ այլոց բարւոյն համար միայն ծախք ըրէք . ա, սինքն ոչինչ մի՛ վատնէք :

6. Աշխատութիւն . — Ժամանակը մի կորսնցունէք . օգտակար գործով մը զբաղեցէք միշտ . ձեզի հարկաւոր շեղող բոլոր գործերէ հեռի կեցէք :

7. Անկեղծութիւն . — Բնաւ գէշ դարձը ուսածքներ մի ընէք, անմեղութեամբ և արդարութեամբ խորհեցէք և ինչպէս որ կը խորհիք այնպէս խօսեցէք :

8. Արդարութիւն . — Մէկու մը մի՛ քնասէք անիրաւութիւն մ' ընելով, կամ անհոգանելով ընել նմա այն բարիքն, զոր կը պարտիք ընել :

9. Չափաւորութիւն . — Ծայրայեղութիւններէ հեռի կեցէք և զգուշացէք ձեզի եղած անիրաւութիւններն այնչափ սաստիկ զգալէ որչափ ձեզ կը թուի թէ արժան են :

10. Մաքրութիւն . — Բնաւ աղտեղութիւն մի կրէք, ո՛չ ձեր մարմնոյն վրայ, ո՛չ ձեր

հազուադէպս լինի և ոչ ձեր տան մէջ :

11. Հանդարտութիւն. — Մի վրդովիք անտի բաներով, ոչ ալ սովորական և անխուսելի դէպքերով :

12. Խոնարհութիւն. — Յիսուսի նմանեցիք :

Նպատակս՝ բոլոր այս առաքինութեանց վարժուել լինելով, որոշեցի անոնցմէ իւրաքանչիւրին համար անբողջ շարժ մ' աշխատիլ, առանց մոռնալու միւսներն :

Ուստի գրքոյկ մը շինեցի տասներկու էջէ բաղկացեալ, որոց իւրաքանչիւրին գլուխը վերոյիշեալ առաքինութիւններէն միոյն անունը դրի. յետոյ կարմիր մելանով այն էջերը եօթնական սիւնակներու բաժնեցի և իւրաքանչիւր սիւնակի վրայ շարժուան օրերէն միոյն անունը գրեցի. վերջապէս տասներկու խոտորնակ գծեր գծեցի և իւրաքանչիւրին սկիզբը առաքինութեանց միոյն անունը նշանակեցի համառօտիւ. այս գծին վրայ և օրուան սիւնակին մէջ մելանով փոքրիկ կէտ մը կը դնէի նշանակելու համար այն պակասութիւններն զորս իմ քննութեամբս կզգայի թէ գործած էի : Այսպէս տասներկու շարժութուան մէջ ամբողջ շրջան մ' ընելէ յետոյ վերստին կ'ըսկսէի տարին չորս անգամ :

Սյապէս շարունակելով զարմացայ թէ
որչափ պակասութիւններ ունիմ եղեր զորս
բնաւ չէի երևակայեր :

Փոքրիկ եղբարքս, Յրանքլինի տուած օրի-
նակն անշուշտ հասկցաք, տակաւ մարդ-
կրնայ ամեն մտութիւններէ հեռանալ ինչ-
պէս որ ամեն գեշ սովորութիւն քիչէն սկսե-
լով հետզհետէ կը շատնայ և կ'ըլլայ երկ-
րորդ բնութիւն : Ուստի աշխատեցէք ձեր
մատաղ հասակէն սկսելով հետևիլ այն մեծ
մարդուն բարի օրինակին որ ինքնօգնու-
թեամբ պարզ դործաւորութենէ մը այնչափ
հարստութիւն և համբաւ ստացաւ, և եր-
ջանկութեամբ ապրեցաւ եօթանասուն և ինե-
սարի ,

ԲՍՐԻ ԸՆԿԵՐ

Պարկեշտ մարդոց ընկերութիւնն դանձ
մ'է :

Սւեչի լաւ է մինակ ըլլալ, քան թէ գեշ
մարդոց ընկերութեան մէջ :

Ըսէ ինձ ուր կը յաճախես և ես քեզ ը-
սեմ թէ ո՞վ ե՞րբ ունի :

Սաստի անուն պարսիկ բանաստեղծ մը
հեռեեայ առակով կուզէ հասկցնել թէ ի՞նչ
աղղեցութիւն կրնէ բարի մարդոց ընկերու-
թիւնն մարդուս բնաւորութեան վրայ :

Պարտած ատենս , կրսէ բանաստեղծն ,
ոտիցս տակ կէս չորցած տերև մը տեսայ որ
անոյչ հոտ մը կը բուրէր . առի դայն և հա-
ճութեամբ հոտոտելով ըսի . Գուն որ այդ-
չափ քաղցր հոտեր կը բուրես , վարճն ես
արդեօք . — ո՛չ , պատասխանեց նա , վար-
դը չեմ ես , բայց ժամանակ մը անոր հետ
ապրեցայ , անկէ է որ անոյչ կը հոտիմ :

— —

Իմաստասէր մը երիտասարդի մը հանդի-
պեցաւ որ չարարարոյ ընկերով մը հետ էր .
երիտասարդը ամչցաւ և կարմրեցաւ : Քա-
ջալերուէ՛ , տղաս , ըսաւ խմաստունն , ուրախ
եմ որ այդ ամօթխածութեան նշանը տեսայ
քու վրադ . սակայն ո՛րչափ աւելի լաւ պիտի
լինէր այնպիսի անձանց հետ երթալ որոց
ընկերութիւնն ըղքեղ չպիտի կարմրցնէր :

— —

ՈՒՍՈՒՄՆ

Ինչ որ է սնունդն մարմնոյ համար, նոյնն է գիրքն ալ հոգւոյ համար :



Յրանսայի ամենահոշակաւոր մատենա-
գիրներէն միոյն, Պօսիւէի, ուսման համար
ըրած ջանքն գեղեցիկ և նախանձելի օրինակ
մը կրնայ լինել մեզ :

Գիշերներն վառած կանթեղ մը կը կենար
Պօսիւէի քով. Պօսիւէ առաջին քունէն յե-
տոյ՝ որ գրեթէ չորս ժամ կը աւելը, կար-
թըննար նոյն իսկ ամենասաստիկ ցուրտ եղած
ժամանակներն, աղօթքը կ'ընէր և կերթար
իւր գրասենեակն աշխատելու մինչև
որ յոգնութիւն զգար. այն ատեն նորէն կը
պառկէր :

Այսպէս անցուց նա իւր կեանքը մին-
չեւ ծերութիւն : Ահա ձեզի ինքնօգնու-
թեան վսեմ օրինակ մը ևս :

Ա.Գ.Ա.ՀՈՒԹԻՒՆ

Ազատ է այն մարդը որ չը համարձակիր

6464-57

ձեռք դպցնել իւր ստակին, որուն տխուր պահապանն է միայն և կարծես զայն պահելէ ուրիշ իրաւունք մը չունի: Ս. գլէ ինչ բարիք կուգայ իրեն (Պօսիւէ):

Ս. Գ. Ս. Հ. Ի ՄԸ, ՈՂԲԵՐԳՍԱԿԱՆ ՄՍ. ՀԸ

Հարուստ սեղանաւոր մը, որ երկար տարիներ ինքզինքը կենաց քաղցրութիւններէն զըրկելով մեծկակ դումարի մը տէր եղած էր, փոքրիկ աղմուկէ մը կը սոսկար, սիրար կը փրթէր որ գանձուն մնաս մը կուգայ, ուստի խորհեցաւ որ գործաւոր մը գտնէ և ըստորերկրեայ տեղ մը շինել տայ: Գտաւ գործաւորն և շինել տուաւ ստորերկրեայ սենեակն, որուն կափարիչը զսպանակով մը կը գոցուէր և կը բացուէր թէ՛ ներսէն և թէ՛ դրսէն: Մեր Պ, ագահը ուշի ուշով քրննեց, փորձեց և ցաւօք սրտի խոստացած վարձքը տալէ յետոյ գործաւորին ճամբայ տուաւ: Պ. Թոյնար (այս էր ագահին անունը) ամեն օր կ'այցելէր իւր սիրելի գանձը և ժամերով իւր ոսկիները կը դիտէր, կը համրէր, կարգաւ կը շարէր, գարձեալ կը համրէր, օր մը մինչդեռ աչքը իւր ոսկիներուն վերայ էր,

կանթեղը կը մարի . մեր ազահն դուրս ել-
նել կուզէ բայց չկրնար դադանիքը դանել . կու-
զէ կափարիչը վերցնել , բայց ի դուր , բոլոր
դորուժեամբը կաղաղակէ , օգնութիւն կը
խնդրէ բայց իւր ձայնը մարդ չը լսեր : Շատ
օրեր կանցնին չը տեսնուիր . մարդ չը դիտէ
թէ ի՞նչ եղած է , ամբողջ ընտանիքն մտա-
տանջութեան մեջ են . իւր աներեւոյթ լինե-
լուն լուրը ամբողջ քաղաքը կը տարածուի և
մինչև վերոյիշեալ դործաւորին ականջը
կը հասնի :

Գործաւորն կասկածելով թէ մի՛ դուչէ
կափարչին յօրինուածը աւրուած լինի , կեր-
թայ քաղաքին դատաւորներուն գործը կը
յայտնէ . կուգան կը բանան ստորերկրեայ
սենեակն և ի՞նչ տեսնեն , սոսկալի տեսարան .
անկենդան մարդ մը փռուած է գանձի մը
վրայ :

ՊՍԸՉՈՒԹԻՒՆ ԵՒ ԺՈՒԺԿՍԼՈՒԹԻՒՆ

Եղբ՛արք պարզ և ժուժկալ կեանքն առող-
ջութիւնը և հողւոյն հանդարտութիւնը կը
պահպանէ . պէտք է մեր կերակուրն , մեր
հագուստներն , մեր շարժուածքն եւ մեր
խօսուածքն պարզ լինին :

Պարոն դիւանդպիրն այնքան համեատու
թիւն ունէր որքան արժանիք : Եղիաա-
բէթ թագուհին Սնդղիոյ դաւառներն սր-
տրտած ժամանակ ուղեց Պարոնի դաշտա-
յին տունը տեսնել, զոր պաշտօնի բարձ-
րանայէն առաջ շինած էր եւ յետոյ մեծ-
ցուցած չէր . — Չեր տունը շատ պղտիկ է,
ըսաւ Թագուհին . — Տիկին, պատասխանեց
Պարոն, տունս բաւական մեծ է ինձ հա-
մար, սակայն Չեր Ահհափառութիւնն է որ
դիւ շատ մեծ ըրաւ իմ տանս համար :

— —

Աթէնացի մը Սոկրատի (Աթէնացի ե-
րեւելի իմաստասէր) հետ տեսակցած միջո-
ցին կը գանգատէր թէ բնաւ ախորժակ
չունի եւ ինչ որ ուտէ դէշ կուգայ իրեն . —
Աղէկ դեղ մը դիտեմ, ըսաւ Սոկրատ, քիչ
կեր, այն ժամանակ կերակուրներն ախոր-
ժելի պիտի երեւնան, ծախքերդ պիտի նու-
ազին եւ դուն առողջ պիտի լինիս :

— —

ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ

— —

Մի լինիր ո՛չ յանճնապատան եւ ո՛չ
դայրացկոտ. հեռի կեցի կռիւներէ, որք աղ-
բիւր են բոլոր շարեաց :

— —

Երբ մէկը քեզ նախատինք մ'ընէ, հողիդ
այնքան բարձրացու, որ այն թշնամանք չը
հասնի մինչեւ քեզ :

— —

Սուրբ Գիրք եւ բոլոր դիտունք համբե-
րութիւն կը քարոզեն մեզ. դայրացկոտ
մարդն միշտ կը մեղանչէ, կը մլասաուի եւ
չատ անգամ կը ծաղրուի :

— —

Սոկրատի ասենանչանաւոր յատկութիւն-
ներէն մին ալ հողւոյ հանդարտութիւնն

էր, զոր որ եւ է գէպք մը, որ եւ է նա-
խատինք մը. որ եւ է գէշ վարմունք մը
չէր կրնար վրդովել: Արսուի թէ այս
խնաստասէրն կրակոտ եւ զայրացկոտ ծնած
էր, սակայն կարող եղած էր յազթել իւր
բնաւորութեան: Օր մը կոշտ մարդ մը
բուռն ապտակ մ' իջեցուց. Ասկրատ հազ-
ուադիւտ համբերութեամբ խնդալով ըսաւ.
դառն է չը գիտնալ թէ ե՛րբ պէտք է ծած
կել գլուխը սաղաւարտով:



Մարդ մը ամենափոքր բաներէ չափա-
զանց կը բարկանար. մանաւանդ իւր ծա-
ռան շատ կը չարչարուէր տիրոջը զայրաց-
կոտ բնաւորութենէն, երբեմն ինչ որ ը-
նէր տիրոջը աչքին գէշ կերեւնար:

Օր մը իւր տէրն բարկացած եկաւ եւ
սեղան նստեցաւ: Թանը կ'ամ տաք էր կ'ամ
պաղ, եւ կամ ո՛չ մին էր եւ ո՛չ միւսն, կը
բաւէ որ ինքն նեղսիրտ մարդ մ'էր, առաւ
թանամանն եւ սլատուհանէն փողոց նետեց.
Բոլասաւորն ալ պաղ արեամբ սկսաւ փողոց
նետել պնակը, հացը, գինին, սեղանի ըս-
պաններն եւ վերջապէս ծածկոյթը. տէրը

կատաղի դէմքով մը տեղէն ելնելով թըշ-
 ուառական, ըսաւ, ի՞նչ կը նշանակէ այդ
 ընթացքը. — Տէր, պատասխանեց սպասա-
 ւորը բոլորովին անտարբերութեամբ, նե-
 թէ՛ եթէ միտքդ չկրցի գուշակել. կարծեցի
 որ այսօր փողոցը կուզես ճաշել:

Տէրը հասկցաւ իրեն տրուած դասը.
 խնդաց սպասաւորին կորովամտութեան
 վրայ եւ այնօրուրնէ դադրեցաւ ինքզինքն
 ծիծաղաչարժ բարկութեանց ենթարկելէ:



**ՔԱԶՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԵՄ
 ԹՇՈՒԱՌՈՒԹԵԱՆՅ**

1812 փետրվար 12ին Լիէժ քաղաքին մօտ
 Անսի քարածխոյ հանքը ջուրերէն ողողուե-
 լով կործանեցաւ եւ ամբողջ գործաւորք
 փլատակաց ներքեւ թաղուեցան գրեթէ.
 հանքին տէրը Իւպէր Աօֆէն չուզեց ազա-
 տել ինքզինքն եւ տասներկու տարեկան զա-
 ւակը. եթէ ես ելնեմ, ըսաւ նա, գործա-
 ւորներս պիտի մեռնին, կամ զանոնք պիտի
 ազատեմ կամ ես ալ պիտի մեռնիմ. ժող-
 վեց իւր յաւաստիւ եւ լքեալ ընկերները,
 գործաւորք Աօֆէնի ձայնէն ոգի առին.

սկսան աշխատիլ հողը ծակերով լուսոյ ճամ-
սբայ մը բանալու համարխոր խաւարին մէջ
որ մի քանի կանթեղներով հաղիւ լուսա-
ւորուած էր, աշխատութիւնն կը նուազե-
ցընէ զանոնք և յուսահատութիւնն կը տիրէ.
Աօֆէնի արժանաւոր որդին կամըչցնէ զա-
նոնք իրենց տկարութեան համար ըսելով.
Ի՞նչ արդոյ պէս կը գործէք. հետևեցէք հօ-
րըս հրամանաց, նա ձեզի չքսա՞ւ թէ հան-
քին տէրերն երեսի վրայ չպիտի թողուն
զձեզ. մէկէն գործաւորք վերստին կը քա-
ջալերուին, ձայն մը կուգայ իրենց ախան-
ջին, կը հասկնան թէ դուրսէն կաշխատ-
ուի իրենց վրիպութեան համար: Բայց աշ-
խատութիւնք շատ ծանր կը յառաջանային,
գործաւորք կը հառաչէին և կը յուսահա-
տէին, Աօֆէն ի դուր կը դրդուէր նոցա ե-
ռանդը. վերջապէս, սաստիկ սրտմտու-
թեամբ պռաւաց թէ պիտի փութացնէ իւր
մահը եւ ամեն յոյս պիտի բառնայ անոնց-
մէ խեղդելով ինքզինքն իւր որդւոյն հետ.
յայնժամ ամենքը անոր առջեւ նետուեցան
եւ երդում ըրին հնազանդիլ նմա. բայց
խեղոյն լոյսերն մարեցան, մթութիւնն դարձ-
եալ յուսահատեցուց զիրենք. հինգ օր

անցած էր այս կացութեան մէջ և Կօֆէն
անընդհատ օգնած էր իւր դժբաղդ ընկե-
րակիցներուն :

Վերջապէս ճամբայ մը բացուեցու եւ
իննսուն դործաւորներէն վաթսունն ազա-
տեցան . ազատեալք Կօֆէնի դիւցազնա-
կան ընթացքին կը սլարատէին իւրեանց կեան-
քը :

— —

Տկարութիւնը մոլութիւն չէ , սակայն ի
մոլութիւն կառաջնորդէ . չար մարդը չա-
րիք կընէ , իսկ տկարը կը թողու որ ընեն :

— —

ՀԱՍՏԱՏԱՄՏՈՒԹԻՒՆ

— —

Հաստատամտութիւն և դօրաւոր կամք
ամեն բանի կը յաղթեն :—

Բուն քեզ օգնէ Աստուած ալ քեզ պի-
տի օգնէ :

— —

Չորաւոր կամաց առջեւ ամեն դժուարութիւն կանհետանայ : Սիրելի եղբայրներս պէտք է համոզուիլ որ ամեն նոր դիւտ, ամեն դիւրութիւն եւ ամեն հաճոյք զորս կը վայելենք չորաւոր կամաց եւ յարատեւ ջանից արդիւնք են . եթէ ձեզ պատմեմ թէ՛ Պ. Քալիսի ինչպէս դատած է հողէ ամաններուն վրայի փայլ տուող բաղադրութեան գաղանկքը, անհաւատալի պիտի թուի ձեզ :

Պ. Քալիսի գրեթէ 40 տարեկան էր երբ սկսեց այս գործին, ապարդիւն փորձերով բոլոր իւր ստացուածքն սպառեց, բայց բընաւ ետ չկեցաւ :

Յետոյ՝ փոխառութիւն ըրաւ փոքրիկ փուռ մը շինեց եւ տաքցնելու համար բոլոր կահ կարասիքն եւ տանը տախտակամածները վառեց եւ իրեն օգնող գործաւորին՝ իբրեւ վարձք՝ իւր հաղուստներուն կէսը տուաւ : Տասն եւ վեց տարի անընդհատ աշխատելէ յետոյ, վերջապէս իւր ջանքերն պսակուեցան ամենափայլուն յաջողութեամբ, որով իւր տնունն անմահացուց յարատեւ կամաց վրասեմ օրինակ մը հանդիսանալով :

Աստուած դրած է աշխատութիւնն իբրեւ
պահապան առաքինութեան : —

— Բնաւ վաղուան մի թողուր , ինչ որ այ-
սօր կրնաս ընել :

— Ի՛նչ կացութեան մէջ որ դանուխ , մը-
տած է՝ թէ այդ կացութեան յարատեւու-
թիւնն բանով մը երաշխաւորեալ չէ , ուստի
սովորէ աշխատիլ :

Առաւօտուն երբոր նեղութիւն զգաս ել-
նելու , իսկոյն սա խորհրդածութիւնը ըրէ՝
Կարժննամ ապրելու եւ իբրեւ մարդ գոր-
ծելու համար . պէ՞տք է դժկամակիլ կատա-
րելու համար այն գործը , որուն սահման-
քած եմ . երկու սաւաններու մէջ տաքուկ
մը պատկելո՞ւ համար միայն ստեղծուած եմ :

— Բայց այս աւելի հաճոյք կը պատճառէ :

— Աւրեմն հաճոյնցդ համար է որ օրը ծա-

գեղաւ և ոչ թէ դործելու կամ աշխատելու համար : Տե՛ս սա տունկերը , թռչունները և մրջիւնները որ զաշխարհ կը հարստացնեն իւրեանց արդիւնքներովն , և դուն չես ուզեր մարդս գործդ կատարել , չես վաղեր հոն՝ ուր քու պարտականութիւնդ կը կանչէ գրեզ :

— Սակայն պէտք է հանգիստ առնուլ :

— Բնութիւնն , ինչպէս ուտելու և խմելու , այս պէտքին ալ սահման դրած է և դուն կանցնիս այն սահմանն , մինչդեռ աշխատութեան և պարտականութեանդ կատարման համար կարեւորն ընելէ ետ կը մընաս :

— —

Պիւֆօն , « Բնական Պատմութեան » անուանի հեղինակն և Գաղղիացի ամենահռչակաւոր մատենագիրներէն մին , ամեն առաւօտ արեւը ծագածին պէս կելնէր . նա իւր այս սովորութեան ինչպէս վարժուած լինելը հետեւեալ կերպիւ կը պատմէ :

Երիտասարդութեանս ժամանակ , կըսէ , քնանալ շատ կը սիրէի և ժամանակիս կէսը ծուլութեանս կը զոհէի . խեղճ Յովսեփս (ՅՅ տարուան ծառայն) ձեռքէն ե-

կածը կրնէր ծուլութեանս յալթելու հա-
մար, բայց չէր յաջողեր. իրեն խոստացայ
մէկ սկուգ տալ ամեն անգամ որ զիս ըս-
տիպէ ժամը 10ին ելնել. հետեւեալ օրն ու-
րոշեալ ժամուն եկաւ զիս ներել, բայց ես
չատ կոչտութեամբ պատասխանեցի. հե-
տեւեալ օրն դարձեալ եկաւ. այս անգամ
այսպիսի սպառնալիքներ ըրի որ սոսկաց,
սակայն կէս օրէն յետոյ իրեն ըսի. — Բա-
րեկամ Յովսեփ, ես ժամանակս կորսնցուցի
և դուն բան մը չը շահեցար. դորձդ լաւ
չես ըմբռներ, մինակ իմ խոստմանս նայէ և
այսուհետեւ կարևորութիւն մի տար իմ ըս-
պառնալեացս. — Հետեւեալ օրը եկաւ ան-
կողնոյս քով, նախ աղաչեցի, պաղատեցայ,
յետոյ սրդողեցայ, բայց նա բնաւ ակամջ
չը կախեց և զիս ստիպեց ելնել հակառակ
իմ կամաց: Արթննալէս վերջը սրտնեղու-
թիւնս գրեթէ մեկ ժամ կը տեւէր: Այն ա-
տեն շնորհակալութիւններս մատուցի և խոս-
տացածս ալ տալով վարձատրեցի:

Խեղճ Յովսեփին կը պարտիմ առ նուազն
10-12 հատոր գործքերս:

ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ

— Եթէ հարուստ ըլլալ կուզէք, միայն վաստկելու ճամբան մի սովորիք. դիպցէք նաև խնայողութեամբ գործածելու ճամբան:

— —

— Սուանց խնայողութեան չկայ երբէք հարստութիւն:

— —

— Գնելու մտլութիւնն չունենալ՝ եկամուտ մ'ունենալ ըսել է:

— —

Յակորբիկ օր մ'ըսաւ իւր հօրը. — Հայրիկ այսքան հարստութիւն ի՞նչպէս դիզեր ես. — Ադկէ դիւրին բան չկայ տղաս, ըսաւ հայրը, սենեակին մէջ վառող մումերէն մին մարելով, վասն դի երբ մէկ մոմն ալ մեր գործը կը տեսնէ, երկու մոմ վառելն աւելորդ է:

— —

ԱՐԴՍԱՐՈՒԹԻՒՆ

— —

Արդարութիւնն բոլոր ընկերական առաքինութեանց աղբիւրն և մարդկային ընկերութեան նուիրակտն կապն է :

— —

Գիւղացի մը իւր գրացւոյն պարտք ունենալով և ինքն ալ աղքատ ըլլալով, ըստակի տեղ հաւերը տուաւ . հետեւեալ օրը երբոր հաւերը ամել կուղէին, դարձեալ իրենց առջի տեղը եկան, վասն զի գոց տեղ մը գրուած չէին : Գիւղացիին տղան որ հաղիւ 7-8 տարեկան կար տունը մինակ էր . երբ որ հաւերուն կարկաչելը լսեց, հաւնօքը վաղեց և յարդին մէջէն հաւկիթները գտաւ . Հէ, Հէ, ըսաւ ինքնիրեն, ահա թարմ և աղուոր հաւկիթներ զորս այնչափ կը սիրեմ, մայրս ալ երբոր գայ շատ պիտի ուրախանայ, պիտի եփէ և պիտի ուտենք : Սակայն, կրկնեց վայրկեան մը յետոյ, կըրհանք այս հաւկիթները վար գնել, չէ որ

դրացւոյն կը վերաբերին , ինչպէս նաև մեր
խեղճ հաւերը , անցեալ օր դպրոցը սովորե-
ցայ թէ երբոր բան մը դանենք , որուն տէ-
րը կը ճանչնանք , պէտք է որ տիրոջը յանձ-
նենք , ուստի առանց ծնողացս գալուն ըս-
պասելու տանիմ տամ :

Արդարև վաղեց դարկաւ դուռը և ըսաւ .
Առէք այս հաւկիթները զորս ձեր հաւերն
ածեցին մեր հաւնոցին մէջ . — Ո՛վ դրկեց քեզ
հօս , հարցուց դրացինն . — Աչ ոք . — Ի՞նչ , ա-
ռանց մէկը քեզի պատուիրելո՞ւ բերիր այս
հաւկիթները . — Այո՛ ճշմարիտ , հայրս և
մայրս տունը չեն , բայց բայց վստահ եմ որ
անոնք ալ ասանկ պիտի ըսէին . — Եւ ի՞նչու
գալերնուն չսպասեցիր . — Արովհետև մինչև
կէս օր հազիւ կուդան և ես ի՞նչ իրաւունք
ունէի այնչափ ժամանակ պահելու ձեր հաւ-
կիթներն :

Արչա՛փ ուղղամտութիւն , ի՞նչ գովելի ըն-
թացք . 7-8 տարեկան տղայ մը լսելով խրդ-
ճին ձայնը , կուզէ զայն հանդարտեցնել .
մեր ամենուս լաւ օրինակ մը կրնայ լինել
այդ մանուկը . ամենափոքրիկ բաներու մէջ
անդամ արդարութեամբ պէտք է վարուիլ :

ԳՍ. Դ. ՏՆՍ. ՊՍ. ՀՈՒԹԻԻՆ ԵՒ ԼՌՈՒԹԻԻՆ

— —

— Երբոր գաղտնիք մը հրապարակ կելնէ՝
յանցանքն անորն է որ վատահելով ուրիշ
չին հաղորդած է զայն :

— Իւր դործող և իւր ձեռնարկութեանց
մէջ յաջողելու ամենամեծ գաղտնիքն , զա-
նոնք գաղտնի պահելն է :

— —

— Մարդս քիչ խօսելէն շատ քիչ անգամ
կը զղջայ , բայց շատ խօսելէն՝ յաճախ , այս
սովորական առած մ'է , զոր ամեն մարդ
գիտէ և զոր ամեն մարդ չը դործադրեր :

— —

Շատախօս մը իւր բարեկամներէն մէկուն
բան մը պատմեց և պատուիրեց որ մարդու
բան չ'ըսէ վասն զի իրեն ալ գաղտնի պա-
հելու համար ըսուած էր . — Անհող եղի՞ր ,
ըսաւ բարեկամը , ես ալ կրնամ քեզի չամ
գաղտնապահ ըլլալ :

— —

ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ

— —

Հաւատարմութիւնն նուիրական բան մ'է պարկեշտ մարդու մը համար . չկայ պէտք մը չկայ երկիւղ մը , չկայ հրապոյր մը՝ որ կարենայ զայն անհաւատարիմ ընել :—

— —

Ս.զնուական մը քաղաքին դուրսէն անցած ատեն գողերու խմբի մը ձեռքն ինկաւ , որք կառքը կեցուցին : Ս.զնուականն խոստացաւ 100 ոսկի տալ եթէ իւր ձեռքի մատնիին փասս մը չը հասցունեն որ հազիւ 20-25 ոսկի կարծէր : Հետեւեալ օրը գողերէն մին համարձակեցաւ մինչև տունն երթալ և ականջն ի վար իւր (ազնուականին) խոստման գործադրութիւնն խնդրել : Ս.զնուականն տուաւ 100 ոսկին , և դէպքը պատմելէ առաջ թողուց մարդը որ երթայ : Պարկեշտ մարդու մը խոստումն անդրժեղի է . պէտք չէ երբէք իւր խօսքէն ետ կենալ , եթէ նոյն իսկ խարերաներու արը-

Նա որ իւր պարտականութիւնը կը կատարէ արդար է . իսկ նա՛ որ պարտականութենէն աւելի՛ կընէ վեհանձն է :

— — —

Վեհանձն մարդը բարերարութեամբ կը պատասխանէ նախատանաց :

— — —


Ամենէն բարեբեր հողն իսկ , փուշ մի այն կարտադրէ , երբ երկրագործն անփոյթ գտնուի նորա բնական արգասաւորութիւնն արդիւնաւորելու :

Das ist die erste...
...
...

...
...
...

...
...
...





معارف نظارت جلیله سنک رخصتیه طبع اول نمشد
۲۶ ذی الحجه سنه ۹۹ و ۲۷ تشرین اول سنه ۹۸

عدد ۶۳۱

1669-1678

10
2m

<< Ազգային գրադարան



NL0025848

8485200

8485200

5m


<< Ազգային գրադարան



NL0025843

11
2m

<< Ազգային գրադարան



NL0025847

8485200

8485200

4m

<< Ազգային գրադարան



NL0025842

12
2m

<< Ազգային գրադարան



NL0025846

8485200

8485200

3m

<< Ազգային գրադարան



NL0025841

13
2m

<< Ազգային գրադարան



NL0025845

8485200

8485200

2m

<< Ազգային գրադարան



NL0025840

14
2m

<< Ազգային գրադարան



NL0025844

8485200

8485200

1m

<< Ազգային գրադարան



NL0025839

